հնգամեայ շրջանում նաւթ ստացուեց 880 միլիոն պուդ. ներկայ 1891 թուականի առաջին ութ ամիսներում նաւթ ստացուել է 190 միլիոն պուդ։

Այդքան արդիւնաբերութիւնը շահագործելու համար Բագուում շինուած են 150 գործարան (զաւոդ), որոց անցեալ 1890 թուականի ամենամեծ արտադրութիւնն էր 80 միլիոն պուդ։

Դոցա համար շինուած ըեզերուարները կարող էին տանել 118 միլիոն պուդից աւելի։

Հորերը փորելու համար մսխուել է 1888 թ. 850,000 ռուբլի, 1889ին՝ 1,105,000 ր. 1890ին 2,517,000 ր. իսկ ներկայ 1891 թ. առաջին ութ ամիսներում 2.060,450 ր. միայն այդ երեք տարում և 8 ամսում փորած հորերի խորութիւնը միասին առած՝ կազմում է 40,046 սաժէն (ասել է թէ 80 վերստ կամ մօտ 8 կիլոմետր)։

Անցեալ 1890 թ. Բագուից արտահանուել է 179 միլիոն պուդ կերոսին։ Գները 1890 թ. ին կերոսինի պուդը տեղում արժէր 20 կոպէկ. նաւթի գինը 6 -7 կոպէկ, այժմ կերոսինը պուդը արժէ 8—6 կոպէկ, նաւթինը 1½ – 2 կոպէկ։

Մի պուդ նաւթից ստանում են Բագուում ընդհանրապէս 30 – 33 տոկոս կերոսին, իսկ Ամերիկայում 70 —75%. Բագուում միայն Բագոզիին է կարողանում ստանալ 60 տոկոս կերոսին։

Թէ որքան վատ է կազմակերպուած կիրոսինի մանրավաճառութիւնը թէ Բագուում և թէ առ հասարակ Ռուսաստանում, այդ երեւում է նոքանից, որ նոյն իսկ Բագուում, ուր մի պուդ կերոսինը մեծ քանակութեամբ (օպտով) պուտը 6—7 կոպէկով է ծախուում, այժմ մանրավաճառութեան մէջ պուդ կերոսինը ծախուում է 30 կոպէկով. իսկ այս տեղ Թիֆլիզում ֆունտը ծախուում է 2½ կոպեկ, այսինքն պուդը մի ռուբլի 40 կոպէկ, ակցիզ վճարելուց յետոյ։

Նիւ — Եորկում ամերիկական կերոսինը արժէր յունվարին 1891 թ. 7,40 ցենտ մի գալոնը, մարտին 7,22 ցենտ, յունիսին 7,02- յուլիսին 6,97 օգոստոսին 6,57. սեպտ. 6,32 ցենտ։ (Մի գալոնը հաւասար է 3,78 լիտր. ցենտը, մի դոլլարի 100 երրորդը է)։ Այսինքն Ամերիկացիք այս տարի շարունակ պակասացրին